## ՈՍԿՓԵԱՆ

*Բառեր որ կան միայն իր քով*

ԱԲԲԱՆԱՅ. ի. իւ. Յունաց, բարձր. էր սեղան կռոց։ Եզեկ. Ի. «Զինչ է աբբանայդ այդ, յոր դուք մտանէք»։

ԱԲԵՂԱՆՈՑ. վանք աբեղայից. Cœnobium, bii. «Թողեալ զաշխարհ եմուտ յաբեղանոց» Պատ. Հայ։

ԱԲՐԱՅ. ի. իւ, Յուն. աղախին, Abra, e. f.

ԱԳԵԿԱԼ. ի. աւ։ Հատ փոկն կախեալ ի թամբէն որ ի ներքոյ ագւոյ դնի ձիոյն. Postilena. իսկ որ առաջի կրծից ձիոյ դնի կրծակալ ասի. Antilena. Աշխ. ձգ. «Զիւսուրն զարդարէ զձին ճակատոցաւ, կրծակալաւ և ագեկալաւն»։

ԱԳՈՆԱՎԱՐ. ի. աւ։ Որ յագոնին նահատակէ. Agonista. «Ագոնավարն Տրդատ վեհագոյն այլոց գտաւ». Պատ. Հայ։

ԱԳՈՆԱՐԱՆ. տե՛ս մրցարան։

ԱԳՈՒՍԵԼԻ. ւոյ։ Որ դիւրաւ ագուսի. Congregabilis, le. Amplectendus, a. m. «Եւ նստեալ ի տեղւոջ ագուսելի կարգային զգիրն ամենեցուն» Եզր. գ.։

ԱԳՈՒՍԵՄ. եա։ Ագուսով առնում, ժողովեմ, կալնում. ուստի ողջագուրեմ. Congrego, Carpo, is, Involo, as. «Սմբատ զերկիրն ագուսեաց Մարաց». Մեսր. պատ։

ԱԳՈՒՍՈՒՄՆ, ման. Գործ ագուսելոյ. Carptus, ûs, m. Carpura, e. f. «Պաղոց ագուսմամբ ելից զբակս»։ Մես. պ.։

. . . . . . . . . . . . . .

ԱՅԳՈՐԵԼԻ. Սխալ է. տե՛ս Ագուսելի։

. . . . . . . . . . . . . .

ԼԱԼԱԳՆԱԲԱՐ. մկ. flebiliter. «Ա՛ռ պաղատագս լալագնաբար, զգութ շարժեա՛ զորովաբար». Տաղ։

ԼԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Լալիւն լալականաց. «Զլալականութիւն առնէին ի վերայ նորա». Մատ. պատ.

ԼԱԼԱԿՑԻՄ, իս. ի միասին լամ. apploro. «Լալակցին իրերօք, ողբակցին թաղծանօք». Տաղ ննջ.։

ԼԱՅՆԱԲԱՑ, ի. աւ. Յայտնապէս բացեալ. late patens. «Զլայնաբաց ցանկութիւն կոկորդին լնուլ»։ (Պատ. Սահ?)։

ԼԱՅՆԱԳԻՆ. գնի. Յոյժ. լայն. perlargus. a. m. «Զի լայնագին է կորստեան ճանապարհն». Եփրեմ ալ.։

. . . . . . . . . . . . . .

ԼԱՃԻՄ, իս. եցի։ Մաշիմ. «Լաշեցան ոտք իմ ի շատ շրջելոյ» (Բաղ.?)։

ԼԱՊԱՏ. ի. աւ։ Խոտ թթուահամ, ստամոքսի յոյժ օգուտ. Աւելուկ (?) հայք ասեն. Lapathumi, եւն։

## ՀԱՅԿԱԶԵԱՆ
## ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ

*Բառեր որ չկան Ոսկփեանի քով*

ԱԲԱՆՈՍ. ի, իւ, աց, օք.։ Նոր Հայկազեան Երեւնոս բառին տակ, իսկ Ոսկփեան Ոպնիոզ բառին տակ դրած են։

ԱԲԻՈՆ, ի, աւ, աց, օք։ Տես ափիոն։ Գործածել բառ որում է սա բառ յունական, նշանակէ աղքատ կամ չքաւոր, և կամ անստացուած։ Տաճկերէն ֆախիր կամ ֆուխարէ։

ԱԳԱՀԱԿԱՄ. ի, իւ, աց, օք։ Նա որոյ կամքն թեքեալ և յօժարեալ է առ ագահութիւն. կամ սիրող ագահութեան։

ԱԳԱՀԱՍԻՐՏ, սրտի, իւ, ից, իւք։ Ունող զսիրտ ագահ, կամ յօժարեալ յագահութիւն։

ԱԳԱՆՈՎԹ. կամ ագանօթ. թայ, աւ, աց, օք։ Է բառ եբրայական և նշանակէ զերաժշտական գործիս. և ըստ այսմ ագանովթ կոչէին ամենայն նուագարանք. նաեւ գործիքն, որով հարկանէին զայսպիսի նուագարանս։ Ոամկ. սազ, կամ քաղէնէ. կամ սազ զարնելու չըպուխ։ Եսայ. 22, 24։

ԱԳՈՐ. ի, աւ, աց, օք։ Պահապան. կամ վերակացու և կամ պաշտպան։ Ոամկ. պէքճի կամ կէօզճի։

ԱԳՈՒՑԻԿ. ցկի, աւ, աց, օք։ Ագուցանող կամ զգեցուցանող, և մերթ ի միմեանս մուծանող։ Ոամկ. հագցնող. կամ կիյախիրմիշ ընող, եւն։

. . . . . . . . . . . . . .

ԼԱԳՈՒԹԻՒՆ, եան։ Պագշոտութիւն, կամ վավաշոտութիւն, կամ ճակաճանութիւն, եւն...։

ԼԱԳՈՒՑԱՆԵՄ. կամ Լաքուցանեմ, ուցի. (անցող.). ծածկել կամ թաքուցանել։

ԼԱԶԱՆԻ. նւոյ. եաւ, եաց, եօք։ Է փոքրիկ կենդանի մի յոյժ գազանաբարոյ. ի գազանութենէ որոյ գրեթէ ամենայն գազանքն երկնչին, նաեւ ինքն առիւծն։

ԼԱԼՕՔ. Ըլանէ սա ի լալ բառէս իբրեւ զգործիական նորա, և նշանակէ լալովք, այսինքն լացիւք կամ ողբալով։ Երեմ. 45. 5։

ԼԱՓԼԻԶՈՂ. ի, աւ, աց, օք։ Լափելով ըմպող. և այս ասի զգազանաց, որք լափեն զարիւն, և նոյնպէս իբր կերակրով պարարին. և այսպիսի է կուզ գազանն, որ ի կալնուլն զհաւն ծծէ զարիւնն, և ի բաց թողու զմիսն. ըստ այսմ ասեն և զայլոց ոմանց գազանաց։ Նարեկ. Ժ.։

---

## ՆՈՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ
## (Երից վարդապետաց)

*Բառեր որ չկան Ոսկփեանի քով*

ԱԲԻՈՆ. Աբիոնացի. բառ եբր. աղքատ յն. ἄπορος, πένης. աղքատ. Հին բառ։ Տես անանկ։ «Աբիոնն աղքատ կոչի ի լեզու հեբրայեցի... Զնոսա (զԵբիոնիտ աղանդաւորս) առաջինքն յիրաւի կոչեն զաբիոնացիս, փոխանակ զի աղքատաբար և տկարաբար ունէին նոքա զՔս. Եւսեբ. Պատմ. գ. 27։

ԱԲՈՆ կամ ԱԲԲՈՆ. Ողջոյն (որպէս թէ ասելով ըստ ասոր. և արաբ. Աբունա, հայր մեր. կամ լա. Ա՛վէ. հյ. Աւետիք)։ «Հայրն Ովր ոչ երբեք յառաջէր, և տայր աբբոն ումեք. Եա ինձ աբոն. Վրք. Հց. ձ.։

ԱԳԱՆՈՎԹ այ. գ. Եբր. ակկանօթ. յոգնականն բառիս ակկան. այն է ամանն հեղանիւթից։ Ես. կբ. 24։ Յայլ տեղիս դնի թակոյկ, խառնելիք։

ԱԳԱՐԱԿԱՑԻՆ, նոյ, ոց. պատշաճեալ ինչ ագարակի, եւն։ «Սահման սաի ի փոխարերութենէ գիւղից, և ագարակային սահմանաց». Սահմ. դ.։

ԱԳԱՐԱԿԱՆԱԼ, որպէս ագարակ լինել, կամ անշէն մնալ։ «Ագարակն քաղաքացեալ էր, և քաղաքն ագարակացեալ». Մամբ. ի Պգր.։

ԱԳԱՐԱԿԻԿ փոքր կամ անպիտան ագարակ, անդ փոքրիկ։ «փոքրիկ ագարակիկ մի ի փոփւզիա. Կոչ. ժզ. «Նուաստ ագարակիկ մի». Տօնակ։

ԱԳԱՒՈՐԵՄ. Իբր. այգաւորեմ. տե՛ս այգորել։

ԱԳԵՏԱԿ. կամ ագէտակ. ներքոյք ագւոյ կենդանւոյն. Վստկ.։

ԱԳԵԽՈՐԵՄ. այգաւորել. տե՛ս այգորել։

ԱԳՈՆԱՐԱՐ. ի. աց. Ἀγωνιζόμενος, certans in agone. որ առնէ զագոն, այսինքն որ հանդիսանայ ի մրցմունս. ախոյեան, նահատակ. «Ա՛ռ այսու ժամանակօք ագոնարարացն տրատգոս տուաւ, որ է զօշ». Եւսեբ. քր. բ.։

ԱԳՈՆԻՍՏԱՅՔ, այց. գ. Ἀγωνισταί. Certatores. Մրցողք, դէմընդէմ ոտոխք ի խաղս ագոնի. «Ագոնիստայքն աթղետայք կոչէին. Եւսեբ. քր. ա.։

ԱԳՈՐԱՆՔ. գ. Մթերք աղբեւաց. Հին բառ։

ԱԳՈԽՈ. (ձեռքի ափը նշանակութեամբ կայ Ոսկփեանի քով, բայց ոչ երկրորդ նշանակութեամբ՝ որ է պինդ, անբեկանելի, կուռ, կամ պիրս. ապիրտ, ա՛գխս թրծեալ. «Ագխս թրծեալ հրով ագուռ՝ կայցէ ի ջրի քան զքար։ Վրք. Հց. ժգ.։

ԱԳՈՒՑԻԿ. ա. Ագուցեալ պնդապէս յայլ ինչ. խորամուխ մածեալ. «Ագուցիկ մթերին խորհուրդք չարութեան». Մծբ. ծթ.։